
**ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ 1877-1878 ԹԹ. ՌՈՒՍ - ԹՈՒՐԶԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐՆ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ
ԷԶԵՐՈՒՄ**

ԳԵՎՈՐԳՅԱՆ Ն. Օ.

XIX դ. 70-80-ական թվականները Օսմանյան Թուրքիայի պատմության մեջ քաղաքական և տնտեսական վայրէջքներով լեցուն ժամանակաշրջան էին: Ռազմաֆեոդալական հետամնաց կարգերը, տնտեսական անմխիթար վիճակը, երեք մայրցամաքներով մեկ սփռված կայսրության հպատակ ազգերի իրավաքաղաքական սահմանափակումները երկիրը հասցրել էին փլուզման եզրին: Իրավիճակին չտիրապետելու և կառավարելու անկարողության պատճառով կրկին ծագեց եվրոպական հզոր տերությունների միջամտության խնդիրը, պետություններ, որոնց քաղաքական վարքագիծը կարելի է վկայակոչել պատերազմից հետո Մ. Մամուրյանի՝ Ռուսիա՝ հաղթական, Գերմանիա՝ զերիշխանական, Անգլիա՝ շահադիտական, Ավստրիա՝ միջնորդական, Ֆրանսա՝ կրավորական, Թուրքիա՝ ծառայական՝ թևավոր խոսքերով:

Միջամտության նախնական շարժառիթը Բալկաններում ազգային-ազատագրական շարժումներն էին, որոնք սպառնում էին վերջնականապես փլուզել կայսրության առանց այն էլ խարխուլ հիմքը: 1875 թ. Հերցեգովինայում, ապա Բոսնիայում օսմանյան լծի դեմ ուղղված հուզումների առաջին ալիքը հարստահարվող սլավոնների բողոքի տարերային պոթելումն էր: Կրկին, իբրև օրինաչափություն, օրակարգ մտավ Արևելյան խնդիրը, որտեղ ազգային-ազատագրական շարժումները և առևտրական ու ռազմավարական ճանապարհների, ինչպես նաև Բալկաններում քաղաքական ու տնտեսական լծակների ձեռքբերման համար եվրոպական հզոր պետությունների շահագրգռությունները մի կողմից հակասում էին միմյանց, մյուս կողմից՝ միահյուսվում:

Հ. Պարոնյանը միջազգային դիվանագիտության այդ խաղերի էությունը ներկայացրել է ժխտման ու հաստատման, ձևի ու բովանդակության՝ երգիծանքի յուրօրինակ հակասությունների ֆելիետոնային հնարով, որը երևույթին հաղորդում էր ծիծաղաշարժ երանգ: «...Արևելյան խնդիրը յուր կերպարանքով մերկացավ ու ճաշակի վերաբերյալ խնդիր մը դարձավ: Յուրաքանչյուր կառավարություն յուր ճաշակին համեմատ կուզե ձևել, կտրել զայն, ինչպես որ իմ բայթոս լայն կուզեմ, դուն քուկինդ նեղ կուզես, ուրիշ մը երկար կուզի, ուրիշ մը կարճ, այնպես ալ կառավարությունք կուզեն, որ այս արևելյան բայթոն լայն, նեղ ու կարճ, միանգամայն նեղ ըլլա»²:

Մ. Մամուրյանը նույն խնդրին անդրադառնում էր խորիմաստ հեզնանքով. «Կնայիս, բարեկամ, պետություններն ալ սկսեր են նազեր ընել և պչրիլ: Ամենքը

¹ Արևելյան մամուլ, 1878, էջ 102-103:

² Պարոնյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1965, էջ 289:

նույն էակին սիրահար և ոչ մին կյոռոու մյուսին, որ անոր սրտին տիրանա» (խոսքը Թուրքիայի մասին է): «Եվ սիրուհին հեռունն այք ունք կընե և ոչ միայն կամքը կկատարե և իրավունք ունի»³: Իսկ Թուրքիայի՝ աշխարհագրական դիրքը և Եվրոպայում կայունություն պահպանելու նրա ունեցած կարևորությունը շեշտում է հետևյալ կերպ. «Անվտանգ դիրք մը բռնելուն քաջ գիտե, որ իր սիրահարներն իրեն համար օրին մեկը պիտի մենամարտին և հին ոխեր պիտի հանեն»⁴:

Ասենք, որ Թուրքիայում բարենորոգումների վերաբերյալ 1839 թ. Գյուլիանեի հաթթը շերիֆը և 1856 թ. ընդունված հաթթը հյուսնայունը, իբրև Թանզիմաթի հրովարտակներ, ժողովրդի սոցիալական վիճակն ամեննին չբարելավելով հանդերձ, ինչ-որ չափով նպաստեցին հասարակական կյանքի առաջընթացին: Հայկական միջավայրում նկատելիորեն առաջադիմեցին կրթական համակարգը, թատրոնը, իսկ հասարակական ըմբռնումների ասպարեզում իբրև աշխարհայացք ձևավորվեց ազգային ինքնագիտակցության և համախմբման գաղափարը: Ձևավորվեցին հայ հասարակական հոսանքները, և զարգացման նոր փուլ մտավ լուսավորական շարժումը: Գործին որոշակի նպաստ բերեց նաև Եվրոպայում կրթված ու ֆրանսիական բուրժուական հեղափոխության գաղափարներով ներշնչված երիտասարդությունը, որն Արևմուտքի առաջավոր մշակույթի ավանդույթներն ու քաղաքակիրթ մտածողությունը հավակնում էր արմատավորել հայ համայնքի ներսում: Վերջապես, 1863 թ. Բ. դռան կողմից վավերացված Ազգային սահմանադրության ընդունումը վերածվեց համայնքի ներքին խնդիրների լուծման լծակի՝ բարենպաստ դեր խաղալով արևմտահայության ազգային հոգեբանության ձևավորման ու համախմբման գործընթացում:

Այսպիսով, 1860-ական թվականների վերջերին հայ համայնքն իր ազգային կառույցներով, եկեղեցիներով, կրթական-մշակութային համակարգով ընդլայնում էր շփման եզրերը Եվրոպական քաղաքակրթության հետ: 1840-ական թվականներից հիմնադրված մամուլն էլ, որպես ազգի հոգևոր գործունեության կարևոր միջոց, 70-ականներին ժամանակի պահանջներին ընդառաջող իր լրատվությամբ և ազգային խնդիրների հարուցմամբ ապրեց աննախադեպ աճ, իմաստավորեց հասարակական նոր գաղափարախոսության սկզբունքները, առաջադիմեց և, որպես հոգևոր արժեք, դարձավ քաղաքական այս կամ այն հոսանքի խոսափողը: Հրապարակը ողողվեց նորանոր պարբերականներով, որոնք իրենց հետագիծը թողեցին արևմտահայ կյանքի պատմության մեջ:

Հասարակական ու քաղաքական խնդիրների՝ տեղեկատվության ու մտածելակերպի տարաբնույթ մեկնաբանություններով նախորդ տարիների համեմատ («Զվարճախոս» 1855-1856, «Դիմակ» 1862, «Հավերժահարս» 1862) հասունացավ և ժամանակի թելադրանքով որակական նոր թռիչք ապրեց երգիծական մամուլը («Մեղու» 1856-1865, 1870-1874, «Թատրոն» 1874-1877, «Միմոս» 1875-1876, «Մամուլ» 1869-1882, «Շառիվառի» 1876):

Ընդունված ճշմարտություն է, որ երգիծական լրատվությունը՝ իբրև հոգևոր պայքարի ազդու զենք, աշխուժացել ու ներգործուն ուժ է ձեռք բերել հիմնականում

³ Արևելյան մամուլ, 1877, էջ 9-10:

⁴ Նույն տեղում:

քաղաքական ցնցումների և բեկումնային մթնոլորտի պայմաններում⁵: Իսկ XIX դ. 70-80-ական թվականների Թուրքիայի պարագայում երգիծանքի համար բացառիկ պայմաններ էին ստեղծվել, որոնք նպաստեցին արևմտահայ քաղաքական լրագրության հասունացմանը: Քաղաքականացված իրավիճակում լրագրական երգիծական թեմաների ատաղձը իրականության հրատապ հարցադրումներն էին, որոնք գրական ժանրերի գեղարվեստական ձևավորմանը հաղորդում էին փաստագրական և պատմագրական արժեք: Եվ ժամանակի տարեգրության ամփոփ դիմագիծը գրական տարատեսակ հնարներով արտահայտվեց արևմտյան հայ քաղաքական երգիծանքի հայելու մեջ: Այսպիսով, քաղաքական երգիծանքի ենթաշերտերում ժամանակի իրականության պատմությունն ու բանասիրությունը եղել են միմյանց լրացնող և փոխկապակցված տրամաբանական կապի մեջ:

Երևույթի խորքային էությունը պատկերավոր ձևակերպելու համար լրագրական հորինվածքներում կիրառվել են գրական հետևյալ ժանրերը՝ քրոնիկներ, կամիթներ, պարողիաներ, ֆելիետոններ, պամֆլետներ, պարադոքսալ լուրեր, աֆորիզմներ, գրոտեսկներ և այլն: Քրոնիկներն օր-օրի պարբերականությամբ միջազգային կյանքի իրադարձությունները մեկնաբանող կիսահրապարակախոսական, կիսագեղարվեստական մեծածավալ կամ փոքրածավալ հաղորդագրություններ էին, որոնք ժամանակի լրատվությունը ներկայացնում էին իրադարձությունների միավոր օղակների հաջորդական շղթայակապերով:

Կամիթն իրօրյա իրադարձությունների լրատվական ձևակերպումների մեկ այլ տարբերակ է, որով հատկապես Հ. Պարոնյանը կառուցեց իր ինքնատիպ քաղաքական երգիծաշխարհը: Ս. Սարինյանի խոսքով կամիթը լրատվական այն ժանրերից էր, որ հագեցած էր անձայրածիր փաստերի համակարգությամբ, խոսքի ճկուն, արդարամիտ ու դիպուկ իմպրովիզացիաներով⁶:

1875 թ. գրչի ազատության վատթարացման պայմաններում, երբ հերթականությամբ արգելվեցին ծաղրանկարները, ապա՝ եվրոպական թերթերի արտատպությունները և վերջում էլ՝ հոդվածները⁷, թուրք խմբագիրներից մեկի՝ ազգությամբ հույն Թեոդոր Կասաբի երեքամյա բանտարկության լուրը սթափեցնում է Հ. Պարոնյանին և ստիպում ժամանակավորապես սահմանափակել կամիթի գործածությունը. «Աղեկ որ ես ծաղրանկարը վերցուցած եմ եղեր»: Իսկ երբ հերթը հասնում է հոդվածների ընտրությանը, երգիծաբանը նկատում է, որ առհասարակ գրելու ոչ մի պայման չկա, և որ ազատ խոսքի դիմողին սպասում է բանտը. «Հոդվածներս ալ կվերցնեմ, այնպես կգրեմ, ինչ ընեմ, երեք տարի ով պիտի երթա նստի հոն»⁸:

⁵ Իշխանյան Ս., XX դարի հայ քաղաքական երգիծանքը, Ե., 1972, էջ 5:

⁶ Սարինյան Ս., Հ. Պարոնյանի ծիծաղի փիլիսոփայությունը (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1993, N 4, էջ 42):

⁷ Խառատյան Ա., Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Ե., 1989, էջ 142-143:

⁸ Պարոնյան Հ., Ընտիր երկեր, գիրք I, Ե., 1954, էջ 145:

Եվ անկախ զգուշավոր դիրքորոշումից, 1877 թ. ապրիլին «Թատրոնը» խափանվեց: Հ. Պարոնյանը, որ 1876 թվականից պարբերականի բոլոր համարներում միջազգային քաղաքականությունը քննադատող երգիծական սուր նյութերով արգասավոր գործունեություն էր ծավալել՝ չունենալով այլընտրանք, լրագրական խոսքը հարկադրաբար փոխադրեց «Մասիս»: Սուլթանական գրաքննության խիստ հսկողության պայմաններում նա կարողացավ «Մասիսում» հրապարակել իր քաղաքական սրամիտ և ժամանակին համահունչ կամիթները. «Մնդալն արգիլված է,- գրում է նա,- իբրև հասարակաց բարոյականություն, այլ կամթելու և միայն տեսածս պատմելու նպատակով «Մասիսի» ստորոտը կիջնեմ»⁹:

Հ. Պարոնյանի ժամանակակից Մ. Մամուրյանը ևս հարկադրված էր դիմել զգուշավոր ոճի՝ իր հրապարակախոսական բնույթի քաղաքական ակնարկները տպագրելով բարոյախոսական զգալի չափաբաժնով, և 1875-1876 թթ. Բալկաններում ծավալվող իրադարձություններին արձագանքում էր զգուշավոր խոսքով, որն «Արևելյան մամուլում» ընթեռնելի է ենթաբնագրերում¹⁰:

Հ. Պարոնյանը «Մասիսում» հնարավորություն ունեցավ իրադարձությունները գնահատել իրատեսորեն, և երգիծական իր աշխարհն այդ սկզբունքով կառուցելու միտումն այնուհետև մնաց նրա լրագրական գործունեության կայուն նշանաբանը:

1875-1878 թթ. երգիծական մամուլի ասպարեզում Հ. Պարոնյանի և Մ. Մամուրյանի հրապարակումները դարձան ժամանակի խոցերը բացահայտելու միջոց: Անշուշտ, երգիծանքի դրսևորումները պայմանավորված էին նրանց անհատականությամբ, հրատապ խնդիրների վերաբերյալ դրա ներքին օրենքների տրամաբանության կռահումներով, լեզվի և մտածողության հարաբերակցության ինքնատիպ բանաձևով: Այս ամենը սեղմ խոսքով ամփոփված է «Հայրենիք» թերթում Հ. Պարոնյանին քննադատելու առիթով գրված Մ. Մամուրյանի գնահատականով. «...հետևապես «Մամուլին» և «Թատրոնին» հետևելու կջանա, թեև ոչ մեկին «հարուստ լեզուն» ունի (խոսքը «Հայրենիքի» մասին է - Գ. Ն.) և ոչ ալ մյուսին «կծու միտքը»¹¹: Եվ զարմանալի չէ, որ քաղաքական իրողությունների էության մեջ հազվագյուտ ձիրքով, «կծու» մտքով և անկաշառ կեցվածքով փայլող Հ. Պարոնյանին իրավամբ այսօր դասում են քաղաքական երգիծանքի՝ հավասարը չունեցող արվեստագետների շարքը¹²:

Ինչ խոսք, քաղաքական տարբեր հոսանքների պատկանելությունը Հ. Պարոնյանին չխանգարեց բարդ ու քաղաքականացված իրականության պայմաններում շատ խնդիրների օրինաչափությունը նույն չափանիշներով արժեքավորելուն*: Այն դրսևորվեց հատկապես «Արևելյան» հարցում ցարական կառավարության վարած խտրական քաղաքականության թեմային

⁹ Մասիս, 28. I. 1878:

¹⁰ Արևելյան մամուլ, 1875, էջ 319:

¹¹ Նույն տեղում, 1874, էջ 289:

¹² **Հակոբյան Հ.**, Հ. Պարոնյանը մեծ տերությունների դիվանագիտության քննադատ (Պատմաբանասիրական հանդես, 2003, N 1, էջ 68):

* Հ. Պարոնյանը դեմոկրատ լուսավորական էր, իսկ Մ. Մամուրյանը՝ սկզբում չափավոր լիբերալ և միայն պատերազմի ժամանակ շրջադարձ կատարեց դեպի դեմոկրատական գաղափարախոսությունը:

անդրադառնալիս: Ղրիմի պատերազմից ժառանգած արևելյան գորոյան հանգույցի լուծման երաշխիքը ցարական կառավարությունը տեսնում էր սուկ քրիստոնյա, ազգակից սլավոնների փրկության շրջանակում. անհեռատես մի քաղաքականություն, որ Ռուսաստանի վարկանիշը չեզոքացնում էր Թուրքիայի սահմաններում ապրող քրիստոնյա այլ ազգերի մեջ: «Ժողովները և վիճաբանության նյութը,- գրում է Մ. Մամուրյանը,- նույն առանցքի վրա կղառնա, սլավյան ցեղը միայն ուրիշ համակրություն կգրավե և անոր ներքին և արտաքին պատճառները բացատրելու պետք չունի»¹³: Իսկ Հ. Պարոնյանը պամֆլետի ժանրով է մեկնաբանում նույն խնդրում Ռուսաստանի քաղաքականության խտրականության անընդունելի հոգեբանությունը. «Եթե սլավ գավառաց ազատությունը ձեռք չբերվի, Հիսուս պիտի գայրանա ձարի դեմ... Հիսուս չկրնար, որ սլավ քրիստոնյաները ճնշվեն... և այսպես խոսելով ռամիկ ժողովրդյան այսպես պիտի կլլեցունե, թե Հիսուս խտրություն կղնե հայ և սլավ քրիստոնեից մեջ, թե Հիսուս սլավները շատ, ոչ... հայերը սլավներե նվազ կսիրե...»¹⁴:

Ասենք, որ Ռուսաստանն անտեղյակ չէր հայ համայնքի տրամադրություններին: Հանրահայտ էին դեսպան Ն. Իգնատևի շփումները ժամանակի հոգևոր դասի հետ: Անգամ Մ. Աստվածածին եկեղեցուն 6140 օխա քաշով նա զանգ էր նվիրել, որը քննադատության թիրախ էր դարձել Մ. Մամուրյանի համար. «Աստված մեզ օխային տակ չձգե»¹⁵: Զատկի տոնակատարության առիթով դեսպանի այցելությունները պատրիարքարան սակավ էին¹⁶, իսկ համայնքի մեծամեծների հետ հարաբերությունները բավական ջերմ էին:

1875 թ. Հերցեգովինայում, ապա Բոսնիայում բռնկված հուզումները սկզբնական շրջանում տարերային, հայդուկային բնույթ էին կրում: Եվրոպական տերությունների կողմից շարժումը հրահրելու ջանքերը բացահայտված են մյուս երգիծաթերթի «Միմոսի» ճամփորդական ժանրի զվարճալի մի հոդվածաշարում, որտեղ հյուպատոսների արկածախնդրությունը երևում է սարկաստիկ երգիծանքի, երբեմն՝ ներողամիտ հումորի հյուսվածքում:

Պարբերականի խմբագիր Հ. Հաճյանը երգիծանքի ասպարեզում վայելում էր համեստ համբավ, սակայն 1875 թ. օսմանյան խիստ գրաքննության պայմաններում Բ. դռան կողմից արգելված թեման շոշափելու համարձակությունը զգալիորեն բարձրացնում է թե՛ խմբագրի, թե՛ պարբերականի վարկանիշը: Հաղորդաշարի աղբյուրագիտական հենքը Վիեննայում հրատարակվող «Դանուբ» թերթի հաղորդագրությունն էր: Երգիծաբանը երկփեղկված մոտեցմամբ (մի կողմից՝ բարյացակամ հեգնանք, մյուս կողմից՝ անողոք սատիրա) ամփոփել է Հերցեգովինայում տեղի ունեցած իրարամերժ դիպվածների ինքնատիպ մի շարադրանք:

¹³ Արևելյան մամուլ, 1877, էջ 13:

¹⁴ Թատրոն 15. I. 1877:

¹⁵ Արևելյան մամուլ, 1877, էջ 13:

¹⁶ Ասիա, 13. IV.1874:

* «Միմոսը» 1875 թ. որոշ ժամանակով խափանվեց:

Երկու խմբի բաժանված հյուպատոսները, մեկը՝ Մոստարից, մյուսը՝ Չեթենյեից, ըստ Հ. Հաճյանի, երեք հրացանակիրների պես մեկնում են, իբր թե «երկրակալներին խաղաղություն քարոզելու»:

Հ. Հաճյանը նրանց սնանկ գործելակերպը բնութագրել է խոսքի և դրության կոմիզմի դիպուկ պատկերներով. «Մեր պաշտոնքն բնությունը կպարտավորե անխոհեմությամբ անձերնիս վտանգի մեջ չդնել, մենք խաղաղության հրեշտակներ ենք և պատերազմի դաշտի մեջ գործ չունինք, ուստի պետք է հրացանի գնդակներե ազատ տեղեր գտնենք»¹⁷:

Կոմիզականն արտաքին ձևի ու ներքին բովանդակության անհամատեղելիությունն է: Եթե առաքելության նպատակը խաղաղությունն էր, ապա խաղաղ գեղջկուհուն ու հովվին ատրճանակով սարսափեցնելն անհամատեղելի էր այդ նպատակի հետ, մանավանդ որ «ի սեր հայրենյաց, ի սեր մարդկության» ամպագոզոռ խոսքերը հնչում էին զավեշտաբար¹⁸: «Երեք հրացանակիրները բեվոլվեր ի ձեռին կսպասեին ոչ առանց այլայլելու: Մարդն ահաբեկ եղած բեռն գետինը կնետե, և տակավին խաղաղարարները բերանները չբացած, կիրճի մը մեջ խույս կուտա անոնց մարդասիրական ճառախոսութենն»¹⁹:

Խաղաղապահների ճոռոմաբանությունների զավեշտը հեղինակը մերկացնում է հակադրության մեկ այլ եղանակով: Անտոության նրանց գլուխգործոցն անմեղ գեղջուկներին իրենց տերություններին ներկայացնելու փաստն է, որովհետև «ապստամբները բացատրություն տալուց խուսափել են ու փախել, և իրենք գտել են ապստամբների որջը»²⁰:

Հակադիր պահերի կոմիզական նույնացման միջոցով ստեղծվել է սրամտության մեկ այլ դրվագ, երբ պարզվել է, որ խեղճ հյուպատոսները «հավետ հարգանաց խաղաղասիրական բնագղումեն, քան թե աշխարհագրական հմտութենե վարեալ Օսմանյան կայսրությունը ետևեն ձգած էին և եթե զեկուցիչ դեպք չպատահեր, հավանական է, որ այս ժամանակ ինքզինքնին Հոլանտայի սահմանի վրա պիտի գտնեին»²¹: Հյուպատոսների հոգեկան դատարկության ու գաղափարական անհետևողականության տրամաբանական ավարտը նրանց վերադարձն էր Մոստար, ուր «իբր պսակ յուրյանց հոյակապ արշավանաց ինքզինքնին տոմինոյի զբոսանաց տված էին»²²: Խայթիչ վերջին հնչյունն ուղղված է ռուս հյուպատոսի հասցեին «...մասնավոր լուրերուն նայելով՝ Ռուսիո հյուպատոս միշտ զույգ-զույգ կդնե»²³, - փորձելով ապացուցել, որ հյուպատոսն այդ ընթացքում ամենասակտիվ հրահրիչն էր:

Օսմանյան կայսրության սահմաններում ծավալված քաղաքական թոհուրոհը Բ. դրանն ստիպեց անցնել գրաքննության խստացված ռեժիմի, քանզի եվրոպական երկրների մամուլից արտատպություններն ու երգիծական հատվածների

¹⁷ Միմոս, 8. X. 1875:

¹⁸ Նույն տեղում, էջ, 114:

¹⁹ Նույն տեղում, էջ 115:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

բացասական ազդեցությունը հասարակական կարծիքի վրա ակնհայտ էին: Խափանվեցին «Միմոսը», թուրքական «Քահրահան», «Հեյալը», «Մեճմուայր մաարիֆը», և այլ պարբերականներ, իսկ «Մասիսը», գրաքննության միջոցառումներին համամիտ, համոզում էր «ետ կենալ հրատարակելե այնպիսի քաղաքական լուրեր, որոնց ստուգությունն իսկ բավական հաստատյալ չըլլա, ինչպես նաև ենթադրություններ պարունակող հատվածներ, Բարձրագույն դրան անկապտելի խնդրո տակ կրնա ձգել»²⁴:

Հ. Պարոնյանի այդ ժամանակվա զգուշավոր ակնարկներից մեկը 1875 թ. Հռոմի պապի կոնդակն էր. երգիծաբանը խարազանում էր հզոր տերությունների շահերը պաշտպանող քահանայապետի ուշացած միջամտությունը: «Պապին այս պատվերը (խոսքը Բալկաններում ապստամբությունը ճնշելու մասին է - Գ. Ն.) կնմանի այն մարդու պատվերին, որ կրակը մարելեն ետքը, կրակը մարել կպատվիրե»²⁵:

1876 թ. ծավալված Բալկանյան հուզումների կիզակետում հայտնվեցին Սերբիան, Չեռնոգորիան, և ապստամբության հրդեհը տարածվեց մինչև Բուլղարիա: Երբ Բուլղարիայում բռնկված ապստամբությունը արյան մեջ ճնշվեց, ու Թուրքիայի բարենորոգումների հանդեպ հավատը վերացավ, մեծ տերությունների նախաձեռնությամբ, խնդրին խաղաղ լուծում տալու նպատակով 1876 թ. վերջերին Պոլսում հրավիրվեց դեսպանաժողով, որի ուշացած գործունեությունը համարձակորեն ձաղկել է Հ. Պարոնյանը. «Եթե դեսպանաժողովը կարող էր քրիստոնեից վիճակը բարվոքել, ինչու այսչափ ատենն է վեր չգումարեցին»: Եվ նկատի առնելով հպատակների իրավագրկությունն ու զոհերի քանակը՝ գրում է. «Կամ չբազմապատկեցին գայն և զմեզ կոտորակի վերածեցին, մանավանդ տասնորդական կոտորակի»²⁶:

Ըստ երևույթին, տպագրական տեսչության մեղմացած քաղաքականության շրջանում է, որ երգիծական մամուլը 1876 թ. մի որոշ ժամանակահատվածում գաղափարական աճ ապրեց, մանավանդ որ կար հասարակության լայն խավերին տեղեկատվությամբ ապահովելու պահանջ: Նման ապակողմնորոշող լրատվություն էր տարածում մամուլը թուրք-սերբական պատերազմի ժամանակ. «Եթե Պոլսո լրագրաց մեկ քանիին խոսքին հավատալու ըլլանք՝ կայսերական գորքերն այսօր Բելգրադի մեջ ըլլալու են...», կամ՝ «Եթե այս հեռագիրն ստույգ է, ըսել կհետևի, թե Սերվիացոց միտքը պատերազմել չէ, այլ տեղերին փոխելով քատրիլ խաղալ մեր գորաց հետ»²⁷:

Հ. Պարոնյանը ձաղկում էր նաև «Էնթերե, ստատուս քվո, կոնֆերանս, բրոբոզիսիոն, լիպերթե, բարլամենթո, րեֆորմ»²⁸ և օտարամուտ այլ խոսքերի հարահոս մուտքը, որ դարձել էր հրապարակային լեզու, ոճ, մտածողություն՝ հայկական միջավայրում հարստացնելով օտարամուլների բառապաշարը:

²⁴ Մասիս, IX. 1875:

²⁵ Թատրոն, 6. IX. 1875:

²⁶ Նույն տեղում, 10. XI. 1876:

²⁷ Նույն տեղում, 26. VI. 1876:

²⁸ Նույն տեղում, 6. X. 1876:

Հ. Պարոնյանի այդ տարվա հոդվածները գրոտեսկի և սրամտության նոր որակ են: Երգիծական փայլուն բառախաղի հորինվածք է հետևյալ հատվածը. «Ինչպես խավարին լույս կհաջորդի, փոթորկին հանդարտություն, ոսկին դրամաթուղթ, այնպես ալ կովին դեսպանաժողով մը հաջորդեց»²⁹:

1848 թ. ֆրանսիական և հունգարական բուրժուադեմոկրատական հեղափոխությունները Եվրոպայում խթանեցին կապիտալիզմի զարգացումը ողջ Արևմուտքում: Բալկանյան ժողովուրդների՝ հասարակության զարգացման այդ փուլին անցնելը անհրաժեշտություն, իսկ խանգարիչ գործոնը թուրքական հետամնաց ավատատիրական կացութաձևն էր: Երևույթը կարելի է լուսաբանել թուրք-սերբական պատերազմի ժամանակ Սերբիայի իշխան Միլանի և Սերբիայում ռուսական դեսպան Նովիկովի միջև կայացած գրույցի ժամանակ հնչող էական այն դրույթով, թե «Չեզոքությունը Սերբիայի համար համարժեք է քաղաքական ինքնասպանության», որ, փաստորեն, շոշափում էր օսմանյան լծից փրկության հրատապ անհրաժեշտությունը³⁰:

Քաղաքական հրապարակախոսության ուղեծրով այս ամենի մեջ թափանցելու համար հարկ էր պատմական, քաղաքական գիտելիքների հարուստ պաշար և դիվանագիտության խոր իմացություն, որոնց լիարժեք տիրապետում էին ինչպես Մ. Մամուրյանը, այնպես էլ Հ. Պարոնյանը: Պատահական չէ, որ ճշմարիտ մտածելակերպով և բեղմնավոր գրչով նրանք բացահայտեցին ոչ միայն Օսմանյան Թուրքիայի քաղաքական դիմազրկությունը, այլև եվրոպական տերությունների դիվանագիտական խարդախ խաղերն այդ երկրում: Քննադատության թիրախ դարձնելով միջազգային դիվանագիտությունը՝ Մ. Մամուրյանն այն բնութագրում է իբրև իրավական դարձվածներով պճնված անօրինականություն, որը «կճգնի ներհակ շահերը իրար կապկպել», քանի որ հենվում է միջազգային օրենք հռչակված կեղծիքի վրա³¹: Իսկ Հ. Պարոնյանի պարողիաներից մեկը հզոր տերություններին ներկայացնում է դիմակավոր կերպարանքով. «Աշխարհի սանձերը բռնող քաղաքագետներն ալ երեսուն դիմակ կանցունեն, բայց անոնք մեզմե որոշվելու համար մարդու պատկեր չեն դներ, այլ կենդանիներու պատկերներ կդնեն երեսնուն վրա, օրինակի համար մին արջու պատկեր, ուրիշ մը աղվեսի պատկեր, ուրիշ մը գայլի պատկեր»³²:

Հետաքրքրական են հայ երգիծական մամուլի՝ պատերազմի ժամանակ Ռումինիայի և եվրոպական հզոր տերությունների հարաբերությունները լուսաբանող նյութերը, որոնք ունեն վավերական արժեք:

Հ. Պարոնյանի ֆելիետոնային ժանրի երկխոսությամբ բացահայտվում է ռումին օգտապաշտ սահմանապահ պաշտոնյայի երկդիմի կերպարը: Ծիծաղելիի հիմքը դարձնելով գաղափարի ու ձևի հակասությունը՝ Հ. Պարոնյանը, հանձին պաշտոնյայի, մարմնավորել է երկրի ռուսամետ կողմնորոշման իրական միտումը.

²⁹ Նույն տեղում, 10. XI. 1876:

³⁰ **Нарочницкая Л. И.**, *Россия и национальное движение на Балканах 1875-1878, М., 1979, с. 20.*

³¹ Արևելյան մամուլ, 1876, էջ 106:

³² **Պարոնյան Հ.**, Ընտիր երկեր, Ե., 1954, էջ 138-139:

«Շոգեկառքերը անդադար կբանին, ռուս զինվորները հակառակ իշխանին կամաց կուզան-կերթան, իշխանը քսակը կգիրցունեն և երբեմն ոսկիները խառնելով կպոռա:

- Ի նչ, թող կուտաք, որ ռուս զինվորները անցնին, չգիտեք, որ ասիկա մեր չեզոքությանը կվնասեն:

- Վնաս չունի, իշխան, բավական է, որ գանձուն չվնասեն:

- Ան ալ կա յա, աշխատեցեք, որ իմ կամացս հակառակ անցնին գորքերը:

- Շատ աղեկ, տեր, դուք անհոգ եղեք:

- Աղեկ չեզոքություն»³³:

Ռուսինիայի չեզոքությունն այդպես էլ չընկալվեց եվրոպական տերությունների կողմից, և 1877 թ. ապրիլի 4-ին Բուխարեստում Ռուսաստանի ու Ռումինիայի միջև կնքված պայմանագրով Բալկաններ ռուսական զորքերի մուտքը ստացավ օրինական հիմք: Մինչ պայմանագիրը ռուսական զորքի Ռումինիայի տարածքով անցնելու գաղտնի փորձերը պատմության էջերում արձանագրված չեն, հետևաբար Շ. Պարոնյանի կողմից իրականի ու մտացածինի զուգորդումներով ներկայացված ֆելիետոնային ժանրի այս թռուցիկ երկխոսությունը մտածելու տեղիք է տալիս երևույթի փաստագրական արժեքի մասին:

Երգիծական մամուլի էջերում լուսաբանված են նաև հետաքրքիր մանրամասներ՝ ռուս և ավստրո-հունգարական դիվանագիտական հարաբերությունների վերաբերյալ, բնութագրվում են Ավստրիայի վատ թաքցրած դիվանագիտական խաղերը: Հայտնի է, որ մինչ պատերազմը Ռուսաստանը, չվստահելով իր ռազմական ուժերին և ձգտելով Եվրոպայում պատերազմի ժամանակ պահել չեզոքություն, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ կնքեց չեզոքության պայմանագիր: Քաղաքական այս կեցվածքը, որ շահավետ էր նաև Ավստրո-Հունգարիային, Շ. Պարոնյանի երգիծական մեկնաբանությամբ հանգեցրել էր կեղծ սիրախաղի. «Քաղաքականությունը, փիլիսոփայական ասպարեզեն փախչելով, սիրո ասպարեզին մեջ մտավ: Շաբաթե մը ի վեր հասած հեռագիրներն ուրիշ բան չեն հայտներ, եթե ոչ Ավստրիո կայսեր Ռուսիո կայսեր հետ պագտվիլը»³⁴:

Երգիծական այլաբանությամբ փոքր կտավի գործ է «Քլեքի բանալի» ֆելիետոնը, որտեղ ներկայացվում է ավստրիացի պաշտոնյայի երգիծական՝ հոգեբանական դիմաստվերը: Կոմիկական մթնոլորտը դրսևորված է դրության կոմիզմով. իբրև պահակ՝ ավստրիացի պաշտոնյան, բանալիները ձեռքին, մերթ բացում, մերթ փակում է նավահանգստի դարպասները: Նա խորհրդանշում է իր երկիրը, որ ռուս-թուրքական պատերազմի ընթացքում երկակի դիրք էր գրավում. «Ավստրիա Քլեքի նավահանգիստը մեզի գոցելեն ետքը նորեն բանալու միտք ունի եղեր... Ինչու գոցեց, ինչու բացավ... ինչի տանք այս փոփոխությունները, արդյո՞ք Ավստրիո շահերը այն ատեն գոց ու հիմա բաց կպահանջեն կոր: Եթե այդպես է, Ավստրիո շահերը շատ փոփոխամիտ են եղեր»³⁵:

³³ Թատրոն, 20. X. 1876:

³⁴ Նույն տեղում, 6. VII. 1876:

³⁵ Նույն տեղում, 7. X. 1876:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Թուրքիան ուներ նաև ներքաղաքական սուր խնդիրներ կապված ասպարեզ մտած «նոր օսմանների» քաղաքական աշխուժացման հետ: «Նոր օսմանների» պարագլուխները, որոնց հաջողվեց անգլիական դիվանագիտության աջակցությամբ պալատական հեղաշրջումներ իրականացնել, կարողացան ի վերջո ցրել դեսպանաժողովը: Դրան հետևեցին սահմանադրության հռչակումը Թուրքիայում (1876 թ.) և Միդհատ փաշայի՝ մեծ վեզիրի պաշտոնը զբաղեցնելը, ապա Աբդուլ Համիդի կողմից խորհրդարանի ցրումը և սահմանադրականների հալածանքը: Քաղաքական իրարահաջորդ խաղերին ուշիուշով հետևող Հ. Պարոնյանն այս ամենը ձևակերպել է լրագրական սեղմ պամֆլետի հորինվածքում: Նա քաղաքական գործչին, տվյալ դեպքում՝ Միդհատ փաշային, բնութագրել է իբրև խաղալիքի՝ Աբդուլ Համիդի «սահմանադրական» խաղերում՝ ընդհանրացնելով թուրքական իրավակարգի անհեթեթությունը. «Միդհատ փաշային դուրս դրկվելը աքսոր չհամարվիր... այս խոսքերեն ես կհասկնամ, որ Միդհատ փաշան տերության մեծ ծառայություն մը մատուցած ըլլալուն համար ի վարձատրություն օղափոխության համար Եվրոպա դրկվեցավ»³⁶:

Պետք է արձանագրել, որ ինչպես Մ. Մամուրյանը, այնպես էլ Հ. Պարոնյանը քաղաքական փաստեր մեկնաբանելիս դիմել են գեղարվեստական աֆորիզմների: Այսպես, Մ. Մամուրյանն Անգլիայի Արևելյան հարցում ցուցաբերած քաղաքականության վերաբերյալ (նկատի առնելով Ռուսաստանը) գրում է. «Կովե սիրուհվույս հետ, բայց գահին մի մոտենար», կամ ռուսական խտրական քաղաքականության վերաբերյալ՝ «Մի թե Դանուբի վրա արդարությունն ուրիշ է, Եփրատի վրա ուրիշ»³⁷ և վերջապես, հեզնում է հայկական միջավայրում առկա կարծիքների բազմազանությունը. «Երբ տունն ավտո շատ կա, տախտակն անավել կմնա»³⁸:

Մ. Մամուրյանը թերևս ոչ իրատեսական, բայց հոգատար մտավորականի իր կեցվածքով ուղիներ էր որոնում Եվրոպային տեղեկացնելու հայերի արժանիքների ու տվյալ ժամանակամիջոցում նրանց թշվառ վիճակի մասին: Համոզիչ է հնչում նրա հրապարակախոսական խոսքը. «Բողոքները, սուկ պատրիարքին անիմաստ են, եվրոպական տերություններին չհասնող, և, որ ճանապարհներից մեկը այն է, որ չունենալով օտար լեզվով տպագրվող թերթ կամ առաջնորդ «պատահած չարյաց դեղ ու դարման չի կարելի փնտրել»³⁹:

Պատերազմի ընթացքի ու ավարտի հետ կապված անցուդարձերը Հ. Պարոնյանի սրամիտ մեկնաբանություններով այնքան ճշմարիտ են վերարտադրվել, այնքան իրատեսական են ու չմիջնորդված, որ կարելի է յուրաքանչյուր տողին վերագրել ժամանակի օրագրական արժեք: Նա շատ հստակ գույներով է ներկայացրել հատկապես Անգլիայի քաղաքականությունը, երբ նրա առերես չեզոքությունը պաշտպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ Թուրքիայի տարածքային ամբողջականությունը վտանգված չէ: Պահն արժանացել է Հ. Պարոնյանի

³⁶ Նույն տեղում, 26. I. 1877:

³⁷ Արևելյան մամուլ, 1878, էջ 47:

³⁸ Նույն տեղում, 1876, էջ 197:

³⁹ Նույն տեղում, 1877, էջ 357:

ուշադրությանը, և նա խոսքի կոմիզմով հագեցած երկխոսությամբ ծիծաղ է հարուցում գրուցակիցների միջև տրամաբանական կապի բացակայության շեշտվածությամբ:

«Անգլիա - Կրնա՞ս կարծել, որ Հնդկաստանի ճամփան գոցելու ըլլաս նե, ես ասանկ անտարբեր մնամ, ես, որ Թուրքիո ամբողջությունը պաշտպանելու պարտավոր եմ:

Ռուսաստան - Մեր միտքն ալ քրիստոնեից վիճակի բարվոքումն է»⁴⁰:

Եվ երբ պատերազմում հաղթանակած Ռուսաստանը շուտափույթ հաշտություն կնքելու համար ռազմական, այլ ոչ թե դիվանագիտական նպատակով մոտեցավ Կ. Պոլսին, մինչ այդ առերես չեզոք Անգլիան հանդես եկավ ակտիվ միջամտությամբ: Նեղուցների շուրջ ծավալված պայքարը ստացավ անսքող կերպարանք՝ առատ նյութ մատուցելով երգիծական լրագրությանը: Մասնավորապես Անգլիայի խորամանկ դիվանագիտական խաղերը դարձան Հ. Պարոնյանի և Մ. Մամուրյանի անխնա քննադատության աղբյուրը:

Հանրահայտ է Սև ծովի մարտավարական կարևորությունը թե՛ Անգլիայի, թե՛ Ռուսաստանի համար, և ամենևին զարմանալի չէ, որ Ղրիմի պատերազմից (1853-1856 թթ.) հետո, երբ Ռուսաստանը Փարիզի պայմանագրով (1856 թ.) զրկվեց ռազմական հենակետ ունենալու իրավունքից, Անգլիայում հրճվանքը անչափելի էր. «Կեցցե Բարլիստոն, Անգլիան ազատեց, մեր հացն ապահովեց, Ռուսիո ճակատը կոտրեց»⁴¹:

Անգլիայի՝ թուրքական կողմնորոշման պարագան հաճախ զարմանք էր պատճառում հասարակությանը, քանի որ Անգլիան և Թուրքիան քաղաքական իրավակարգով և մարդկային հարաբերությունների մասին իրենց մոտեցումներով անհամատեղելի երկրներ էին: Այդ առթիվ Մ. Մամուրյանը հեզնում է «Ինչ ընդհանրություն կա Անգլիայի և Թուրքիայի միջև, ստրկության և ազատության, սահմանադրության և միապետության միջև», սակայն անգլիացու համար «Բոսֆոր երկրորդ Թեմզ գետն է, Հնդկաստանի մեր գանձերին բանալին, Միջերկրականի թագուհին»⁴²:

Եթե Անգլիայի դիվանագիտական խարդավանքները Մ. Մամուրյանն արձանագրում էր ընդհանրացված հրապարակախոսական բնույթի շարադրանքով, ապա Հ. Պարոնյանը, թերևս թերթի քաղաքական կողմնորոշումով պայմանավորված, քրոնիկի ժանրը միահյուսում էր կամիթին՝ ցույց տալով Անգլիայի և պատերազմում հաղթանակած Ռուսաստանի դիվանագիտական քայլերի պարբերական հաջորդականությունը:

Իրադարձություններն անաչառ գնահատելու բնատուր կարողությամբ, նաև գրոտեսկի հասնող երգիծանքով է Հ. Պարոնյանը ներկայացնում անգլիական նավատորմիղի հայտնությունը՝ Բոսֆորում և նրա ելումուտը Մալթա ու Պեշիքա և ոչ մի տեղում չհանգրվանելու՝ Անգլիայի պատճառաբանությունը. «Ալ մարդուս համբերությունը կհատնի... սա նավատորմիղ ըսածդ ալ մարգագետնի մեջ

⁴⁰ Թատրոն, 27. IV. 1877:

⁴¹ Արևելյան մամուլ, 1877, էջ 110:

⁴² Նույն տեղում, 1877, էջ 10:

չպահվեր, այլ ծովու վրա, տեղ մը որոշեցեր ու հոն մնա... այլ միայն հարցապնդումով շվարեցուցին մինչև հիմա»⁴³:

Եվ իրարահաջորդ դեպքերը հասցրին «նախնական» հաշտության պայմանագրի կնքմանը, որը եթե «Ժողովրդին կողմեն լավ ընդունելություն գտնա, ուրեմն ընդարձակ հաշտությունը պատրաստ է»⁴⁴: Մեծ երգիծաբանի կանխագուշակումն իրականացավ. Բեռլինի վեհաժողովը դարձավ նախնական հաշտության պայմանագրի տրամաբանական շարունակությունը, որը աճուրդի էր վերածելու Հայկական հարցը:

ОТГОЛОСКИ ВОСТОЧНОГО КРИЗИСА И РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ 1877-1878 ГГ. НА СТРАНИЦАХ ЗАПАДНОАРМЯНСКОЙ САТИРИЧЕСКОЙ ПЕЧАТИ

ГЕВОРКҮЯН Н.О.

Резюме

В 70-ые и 80-ые годы XIX века Османская империя переживала острый политико-экономический и финансовый кризис. “Восточный вопрос” и русско-турецкая война 1877-1878 гг. явились логическим продолжением этой ситуации.

Сложные события внешней и внутренней политики служили своеобразным источником для западноармянской сатиры. Западноармянская публицистика, в частности, “Театр” А. Пароняна и “Мимос” А. Ачяна, обращались к “Восточному вопросу” и военным событиям в рамках привычных для искусства сатиры жанров: фельетона, пародии, гротеска. На эти события в “Восточной прессе” откликнулся и М. Мамурян.

⁴³ Մասիս, 31. X. 1878:

⁴⁴ Նույն տեղում: